2.	ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ HISTORY ИСТОРИЧЕСКИЕ НАУКИ

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԳԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՔՐ ԱՍԻԱՅԻ ԳՈՐԳԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐՈՒՄ (XIX դ. վերջին քառորդ -XX դ. առաջին քառորդ)

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՇԽՈՒՆՋ
Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ԳՊՀ դասախոս
էլփոստ՝ ashkhunjpoghosyan@gmail.com

19-րդ դարի վերջերին փոքրասիական գորգագործական կենտրոններում սկսվում է գորգագործության վերելք, որը բացատրվում է Արևմտյան Եվրոպայում և ԱՄՆ-ում արևելյան ձեռագործ գորգերի պահանջարկի բուռն աճով: Հաշվի առնելով փոքրասիական ավանդական գորգագործական կենտրոնների հարմար պայմաններն ու նաև էժան ինքնարժեքով արտադրանք ստանալու հանգամանքը՝ արևմտաեվրոպական մի շարք խոշոր ձեռնարկատերեր սկսեցին այդտեղ հիմնել գորգագործական ֆաբրիկաներ: Գորգագործության ծավալման համար տարածաշրջանում կային անհրաժեշտ բոլոր հումքային պաշարներն ու բավարար քանակով որակյալ գորգագործներ: Բացի արտերկրի ներդնողներից՝ այդ ասպարեզում աչքի ընկան նաև տեղի ձեռնարկատերերը (Գրիգոր Ղոնդուկչյան, Մովսես Թելֆեյան, Արմենակ Թորգոմյան, Թագվոր Սպարտալյան և այլն): Ինչպես վկայում են փաստերը, գոյություն ունեցած ֆաբրիկաներում, մասնավորապես նաև սուլթանական «Կում-Կափու» և «Հերեկե» ֆաբրիկաները, գորգագործուհիների մեծ մասը հայուհիներ էին: Դա հաստատվում է այն հանգամանքով, որ Փոքր Ասիայի արևմտյան տարածքների հայաբնակ գորգագործական կենտրոնները հայաթափվելուց հետո, գորգագործությունը խոր անկում էր ապրում, և գորգագործական ձեռնարկությունների մեծ մասն էլ փակվեց:

Բանալի բառեր՝ *մանուֆակտուրա, «Մասմանե», որբանոց, գորգագործություն, Փոքր Ասիա, Կեսարիա, Ուրֆա:*

Ներածություն: Քննարկվող ժամանակաշրջանում Արևմտյան Հայաստանում և Փոքր Ասիայում ապրանքային գորգագործության կտրուկ վերելքը կապված էր Արևմտյան Եվրոպայում և ԱՄՆ-ում ձեռագործ գորգերի նկատմամբ հետաքրքրվող հասարակական նոր շերտերի կազմավորման հետ: Դա միջին խավն էր՝ արդյունաբերական հեղաշրջման արդյունքում ի հայտ եկած բարձր վարձատրվող տեխնիկական մասնագետները, բարձրակարգ բանվորներն ու մտավորականությունը:

Իրականում Արևմտյան Եվրոպան այդ տարածաշրջանների գորգերին ծանոթ էր դեռևս արաբական խալիֆաթի դարաշրջանից: Արդեն VIII-X դարերում արաբների տիրապետության տակ հայտնված Պիրենեյան թերակղզում **Կորդովայի** խալիֆին ու իշխող վերնախավին պատկանող արհեստանոցներում արտադրվում էին նաև փոքրասիական ծագումով, բայց տեղական տեխնոլոգիաներով բնորոշվող գորգեր: Արաբ պատմիչ իբն Հաուկալը որոշակիորեն տեղեկացնում է, որ «Անդալուզում պատրաստում են բրդե կտորներ, որոնք լավագույն հայկական /արմանի/ թավշակերպ /մահֆուր/ /արտադրանքի/ նման են, որը բարձր գին ունի, դեռ չհաշված թամբի գորգերը /նամաթ/, որոնք այնտեղ են պատրաստվում»[1]: Նշենք, որ Պիրենեյան թերակղզում արտադրվոծ գորգերը հայտնի էին հենց «**անդալուզական**» գորգեր անունով: Ըստ երևույթին, Արևմտյան Եվրոպայում գորգագործական մանուֆակտուրաների կազմավորման հիմքում էլ ընկած են հենց Պիրենեյան ավանդույթները: Դրանց վերաբերող վաղագույն տեղեկություններից մեկը ներկայացնում է 1066թ. տեղի ունեցած Հաստինգսի հայտնի ճակատամարտի ընթացքը պատկերող 71 մետրանոց գործվածքը, որը մասնագիտական շրջաններում հայտնի է **«Մաթիլդա թագուհու գորգ»** անունով: Ենթադրություններից մեկի համաձայն՝ այն գործել են Վիլհելմ Նվաճողի կնոջ՝ Մաթիլդա թագուհու նախաձեռնությամբ արքունական արհեստանոցներից մեկում: Մեկ այլ ենթադրությամբ էլ այն գործել են թագավորի եղբայր Օդոն արքեպիսկոպոսի պատվերով՝ Նորմանդիայի Բայե քաղաքի նորակառույց եկեղեցու համար, ու այդ պատճառով էլ այն հայտնի է նաև «Բայեի գորգ» անվանումով[2]: Անշուշտ, մոտ երկու դար շարունակված խաչակրաց արշավանքների ու դրա հետ կապված Արևելք-Արևմուտք մշակու-

---

[1] Աբու-լ Կասիմ Մուհամմադ Իբն, «Երկրի պատկերը»,Արաբական աղբյուրներ, Գ, արաբ մատենագիրներ, Թ-Ժ դարեր: Ներածությունը և բնագրերից թարգմանությունները պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արամ Տեր-Ղևոնդյանի, Ե., 2005, էջ 599:

[2] https://ru.wikipedia.org/wiki/Гобелен_из_Байё

թային փոխազդեցությունները նույնպես նպաստել են Արևմտյան Եվրոպայում արևելյան մշակույթի հանդեպ հետաքրքրության առաջացմանը, և այդ բոլոր դեպքերում էլ հայոց գորգագործական մշակույթը ունեցել է իր երևելի դերը: XV-XVI դարերից եվրոպական մի շարք երկրներում (Անգլիա, Ֆրանսիա և այլն) ստեղծվում են գեղարվեստական գործվածքի մասնագիտացված մանուֆակտուրային ձեռնարկություններ, որոնք սկսում են մասնագիտանալ նաև արևելյան գորգերի տեխնոլոգիաներով գորգեր գործելու ասպարեզում: Դրանք նախատեսված էին արևմտաեվրոպական արքունիքների ու ընդհանրապես աշխարհիկ ու հոգևոր վերնախավի կարիքների բավարարման համար: Բնականաբար այդպիսիք ավանդաբար կային նաև Արևելքի երկրներում, մասնավորապես Իրանում և Օսմանյան Թուրքիայում: Մենք ենթադրում ենք, որ դրանցում կարևոր տեղ ունեին հայ մասնագետները: Չխորանալով այս հարցում՝ նշենք միայն, որ դրա մասին վկայող պատկերավոր փաստարկներ են 1690-1720-ական թվականներին Կոստանդնուպոլսում պալատական նկարչի դերում եղած ֆլամանդացի գեղանկարիչ Ժան Բատիստ Յան Մուրի (1671-1737թթ.) կտավներից մի քանիսը: Դրանցում հեղինակը պատկերել է արքունիքի ասեղնագործուհիների աշխատանքային դրվագներից՝ նշելով նաև նրանց հայուհիներ լինելը /**Պատկեր 1**/[1]: Մեզ համար ակնհայտ է, որ XVI - XIX դարերում Օսմանյան Թուրքիայի այդօրինակ ձեռնարկություններում, գեղարվեստական գործվածքի, ոսկերչության ու զինագործության գեղարվեստական այլ արհեստագործությունների ոլորտում նշանակալից մաս են կազմել հայերը: Պատճառը մեկն էր՝ եկվորներն ունակ չէին արհեստների տիրապետմանն ու դրանով զբաղվելուն: Եվ իրականության մեջ էլ այդպիսի նկարագիրը շարունակվել է ընդհուպ մինչ XX դարի սկզբները: Այն, որ սուլթանական արհեստանոցների մասնագետները հիմնականում եղել են հայերը, հստակորեն նկատվում է Կոստանդնուպոլսում գործող **Կում-Կափուի** ձեռնարկության օրինակով, որտեղ XIX դարի վերջերում գլխավոր մասնագետներ էին Հակոբ Քարաջյանը, Զարեհ Բենիամինը, Կարապետ Աբելյանը և Աբրահամ Թուսունյանը, որոնք մինչ այդ աշխատել էին Սեբաստիայում և Կեսարիայում գործող համանման ձեռնարկությունե-

[1] httpcommons.wikimedia.orgwikiCategoryJean_Baptiste_Vanmourembroderi jomen

ում[1]: Այդ նույն իրավիճակը նաև 1844 թվականին հիմնարված Հերեկկեի ձեռնարկությունում էր:

Արևտյան Եվրոպայում ու Հյուսիսային Ամերիկայում արևելյան գորգերի հանդեպ եղած բարձր պահանջարկը բավարարելու համար գորգավաճառների կողմից վաճառահանվող ձեռագործ գորգերի աճող ծավալներին զուգընթաց արևմտաեվրոպական երկրներում, արդեն XIX դ երկրորդ կեսից սկսած, ավելանում է նաև ձեռագործ գորգերի արտադրական ձեռնարկությունների քանակը: Սակայն դրանց արտադրանքը թանկ էր, ուստի որոշ ձեռնարկատերեր ֆաբրիկաներ են սկսում հիմնել փոքրասիական գորգագործական կենտրոններում: Արևելյան գորգերին տեղյակ կաթոլիկ միսիոներների ու առևտրականների համար ակնհայտ էր գորգագործության ավանդական կենտրոններում գորգերի զանգվածային արտադրություն կազմակերպելու շահավետությունը: Դա առաջին հերթին պայմանավորված էր չափազանց էժան աշխատուժի ու նաև անհրաժեշտ հումքի տեսականու առկայությամբ: Այդպես ապրանքային արտադրության լայն ծավալումով ավելի մեծացավ արևելյան գորգերի հանդեպ եղած հետաքրքրությունը, և սկսվեց նաև դրանց ծագումնաբանական ու մշակութաբանական խնդիրների ուսումնասիրումը:

Պատկեր 1. Սուլթանի հարեմի ասեղնագործ հայուհիները, Ժան Վան Մուր, կտ. յուղ., 1710-20 թթ.:

[1] Trames d'Armenie. Tapis et broderies sur les chemine de l'exil(1900-1940), Museon ArlatenImages En Manoeuvres 'Editions, 2007, էջ 32/հետայսու՝ Trames d'Armenie/: Տես նաև՝ Heinrich Jacobi, How to Know Oriental Carpets and Rugs,London, 1974, էջ 88-89:

Այդ գործընթացները կատարվում էին այն ժամանակաշրջանում, երբ Օսմանյան Թուրքիայում տեղի էին ունենում ազգային զարթոնքի գործընթացներ, և նորաթուխ թուրք մտավորականությունն ու ազգայնական հոսանքները մտահոգված էին քաղաքակիրթ Եվրոպայի համար թուրքի ընդունելի կերպար ստեղծելու գաղափարով: Հայտնվեց արևելագետների մի հոծ բազմություն, որի շնորհիվ էլ ընդունվեցին ու լայն շրջանառության դրվեցին «**թուրքական գորգ**», «**սելջուկյան գորգ**», «**քոչվորական գորգ**», «**օտտոմանյան ասեղնագործություն**» ու նմանատիպ այլ հասկացություններ: Դրանք վերաբերում էին Արևմտյան Եվրոպայի ազնվականական վերնախավում մեծ հեղինակության արժանացած փոքրասիական ձեռագործ գորգերին, որոնք արդեն մի քանի դար շարունակ համարվում էր գեղարվեստական արժեք: Չխորանալով մանրամասների մեջ ուղղակի հարկ ենք համարում նշել, որ այդ գորգերի ծագումնաբանությանը մենք անդրադարձել ենք մեր նախորդ ուսումնասիրություններում ու հանգել ենք այն եզրակացության, որ փոքրասիական գորգագործական մշակույթի կազմավորման հարցում առանցքային դեր է ունեցել հայ հանրույթը[1]: Այս պայմաններում էլ մասնագիտական շրջաններում մանուֆակտուրաների արտադրանքն ու ընդհանրապես փոքրասիական գորգագործական կենտրոններին բնորոշ գորգերն ու մյուս գործվածքները ճանաչվել են որպես թուրքական մշակույթի բաղկացուցիչ տարր, և ընդհանրապես տարածաշրջանում գորգագործական մշակույթի ծագումը համարվել է սելջուկ-թուրքական ցեղերի ներթափանցման արդյունք: Ինչքանով է հնարավոր հիմնավորել մի այդպիսի տեսություն, երբ հանրահայտ էին նաև բազմաթիվ սկզբնաղբյուրներ, ըստ որոնց՝ նախքան սելջուկների հայտնվելն էլ այդ տարածաշրջանում գոյություն է ունեցել գորգագործական զարգացած մշակույթ[2]: Փոքր Ասիայում՝ այդ թվում նաև Անատոլիայում, հայոց ներկայության մասին հիշատակությունները վերաբերում են դեռևս անտիկ դարաշրջանին: Հետագայում Մեծ Հայքի տարբեր նահանգներից այդտեղ են ուղղվել հայոց մեծաքանակ հոսքեր, այնպես որ V -VI դարերում Փոքր Ասիայի արևելյան մասերում, մասնավորապես Կապադով-

[1] Տես՝ Poghosyan Ashkhunj, On the Origin Anatolian Rugs, /Անատոլիական գորգերի ծագումնաբանության հարցի շուրջ/.-«Armenian Knot»: Traditions of Carpet Weaving Art.Proceedings of the international Conference.Yerevan, 20-22 November, 2013, Ministry of Culture of the Republic of Armenia Yrevan, 2016, էջ 266-267, 275-276:

[2] Poghosyan Ashkhunj, էջ 258-260:

կիայում ու մերձակա տարածաշրջաններում հայերը կազմում էին բնակչության գերակշիռ տարրը:

Հայոց թվաքանակը նախկինում էլ հայաշատ փոքրասիական բնակավայրերում ավելի է աճում Բագրատունյաց Հայաստանի անկումից հետո ու նաև XVI-XVII դարերում, երբ պատմական Հայաստանի կենտրոնական ու արևելյան նահանգներից բռնի այդտեղ են վերաբնակեցվում տեղահանված տասնյակ հազարավոր հայեր[1]: Մենք մի քանի առիթներով անդրադարձել ենք խնդրո առարկային ու շեշտել վերոհիշյալ գործընթացների արդյունքում փոքրասիական մշակութային համալիրներում Հայաստանի արևելյան նահանգների ակնհայտ ազդեցության առկայությունը: Մեզ համար դա հատկապես նկատելի է գորգագործության ասպարեզում, որը մենք բացատրել ենք վերոհիշյալ տեղաշարժերով[2]: Անշուշտ, պետք շեշտենք նաև, որ հայերից բացի գորգագործությամբ զբաղվում էին նաև այլ էթնիկական հանրույթներ ևս, ու դա միանգամայն բնական է: Մասնավորապես աղբյուրներում կան տեղեկություններ, որ Փոքր Ասիայում գորգագործությամբ զբաղվում էին նաև հույները, քրդուհիներն ու ավշարուհիները և այլն[3]: Ընդհանրապես քրդական ցեղերին անհայտ չէր այս զբաղմունքը: Սակայն փոքրասիական գորգագործական մշակույթի ավանդույթների պատմահամեմատական ուսումնասիրությունը ակնհայտ է դարձնում դրանցում հայկական ակունքների ազդեցիկ լինելը: Ի վերջո, փաստ է, որ Փոքր Ասիայում գորգագործական մշակույթն առավելապես

Պատկեր 2. Հերեկեի ֆաբրիկայի հայ գորգագործուհիները:

[1] Պողոսյան Ա. Հայաստանի պատմական ժողովրդագրություն: Ուսումնա-մեթոդական ձեռնարկ մագիստրատուրայի ուսանողների համար, Եր., 2018, էջ 36-39:

[2] Poghosyan Ashkhunj, On the Origin Anatolian Rugs, /Անատոլիական գորգերի ծագումնաբանության հարցի շուրջ/.- «Armenian Knot»: Traditions of Carpet Weaving Art.Proceedings of the international Conference.Yerevan, 20-22 November, 2013, Ministry of Culture of the Republic of Armenia Yrevan, 2016, էջ 266-267,275-276:

[3] Ա. Ալպոյաճեան, Պատմությիւն հայ Կեսարիո, Գահիրե, 1937, էջ 1500:

զարգացած էր հայաբնակ վայրերում, և այդ հանգամանքով էլ պայմանավորված՝ հենց հայաշատ բնակավայրերում է, որ XIX դարի կեսերից սկսած՝ ստեղծվեցին գորգագործական առաջին մանր ձեռնարկությունները:

Այս առումով կատարյալ օրինակ է Կեսարիան՝ Փոքր Հայքի պատմամշակութային կենտրոններից մեկը: Այստեղ մինչ արևելյան գորգերի նկատմամբ եվրոպական շուկայում պահանջարկի կտրուկ աճը, գորգեր ներմուծվում էին մերձակա Կիր Շեհիրից: Կեսարիայում տեղի գործողները հիմնականում գործում էին սեփական կարիքների բավարարման կամ էլ կոնկրետ պատվերների կատարման համար[1]: Կեսարիայում ավելի շատ հարգի էր հին գորգերի հավաքումը, այսինքն՝ ակնհայտորեն կար գորգագործական մշակույթի հանդեպ որոշակի հետաքրքրություն: Նրանցից ոմանք էլ (Գրիգոր աղա Գոնդուկչյան, Մովսես Թելֆեյան և այլն) 1893 թվականին կազմակերպում են մետաքսե գորգերի արտադրություն[2]: Պահանջարկի աճին զուգընթաց ստեղծվում են նոր ձեռնարկություններ, ու 1897-98 թվականներին Կեսարիայում և գավառում գորգի տորքերի թիվը հասնում է 2000-ի, իսկ 1901թ.-ին՝ 5000-ի[3]: Դրանք հիմնականում պատվերներով աշխատող տնայնագործներ էին:

Արտադրության՝ վերը նշված ծավալի համար անհրաժեշտ էին հազարավոր գորգագործուհիներ ու համապատասխան այլ մասնագետներ: Դրանց պատրաստման հարցում կային երեք հիմնական գործոններ՝

ա. Վարպետ գորգագործուհիները, որոնք իրենց հմտությունները ավանդաբար փոխանցում էին գերդաստանի դեռահաս աղջիկներին:

բ. Հայոց կրթական հաստատությունները, որոնցից շատերում աշակերտուհիներին սովորեցնում էին նաև գորգագործություն և ասեղնագործություն: Բնորոշ օրինակ է 1875թ. հիմնադրված Երզնկայի Քրիստինյան կոչված աղջկանց վարժարանը, որտեղ աշակերտուհիները, ի շարս այլ արհեստների, սովորել են նաև գորգագործություն և կարուձև[4]:

---

[1] Ա. Ալպոյաճեան, նշվ. աշխ., էջ 1499, տե՛ս նաև՝ Ա.Պողոսյան, Գորգագործությունը Փոքր Ասիայում (XIX դ. երկ. կես, XX դ. առ. քառորդ).- Հայ ժողովրդական մշակույթ XVI, Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում, Դերենիկ Վարդումյանի ծննդյան 90-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու, Եր., 2014, էջ 104:

[2] Ա. Ալպոյաճեան, նշվ. աշխ., էջ 1500, Շավարշ Եսայան, Բյուզանդիոն, թիվ 472:

[3] Ա. Ալպոյաճեան, նույն տեղում,Ե.Երկաթեան, «Բիւզանդիոն», թիվ 638, Յ. Նշանեան, «Արևելք», թիվ 3825, Կ.Տեվելեան, «Մանզումե», 1901, թիվ 320:

[4] Գ. Ստեփանյան, Երզնկա, Երևան, 2005, էջ 360:

Գ. Այրիանոցներն ու որբանոցները: Հատկապես էական նշանակություն ստացան այս վերջինները: Դրանք հիմնականում ի հայտ եկան XIX դ. երկրորդ կեսից սկսած, երբ տասնյակ հազարավոր հայ որբերին ու այրիներին օգնելու համար բարեգործական հիմնարկների կողմից հայաշատ քաղաքներում բացվեցին հիվանդանոցներ, կրթօջախներ ու նաև որբանոցներ և այրիանոցներ: Դրանցում որբերին ու այրիներին խնամելուց բացի՝ նրանց սովորեցնում էին տարատեսակ արհեստներ, որոնց թվում նաև գորգագործություն ու ասեղնագործություն: Այդպիսիք էին, օրինակ, Խարբերդի որբանոց-կրթարանը[1], Հաճնի և Մարաշի որբանոցները և այլն[2]: Կազմակերպվել էին նաև եկեղեցիներին կից որբանոցներ, մասնավորապես նման հաստատություն էր գործում Կարինի Կարմիր եկեղեցում, որտեղ որբերին ուսուցանում էին նաև կազմարարություն ու ոստայնանկություն[3]:

Հաճնում 1910թ. մարտի վերջերին ստեղծվել էր գորգի արհեստանոց՝ յոթ դազգահով[4], Ադանայում՝ դերձակատուն, Տարսոնի, Գոգ- Օլուգի, Մարաշի, Քեսաբում գուլպայագործության և մանիսայագործության արհեստանոցներ և այլն[5]: Հայ բարեգործական միությունը Ադանայում հիմնում է այրիանոց ու այդտեղ ստեղծված գորգի ձեռնարկությունում աշխատում և իրենց ապրուստն էին ապահովում շուրջ 350 այրիներ և աղջիկներ[6]: Կիլիկիայի վերջնական հայաթափումից հետո դրանց մեծ մասը տեղափոխվում է Սիրիա ու Լիբանան[7]:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ իրականում վերը նշված երեք գործոնների արդյունքում փոքրասիական հայաշատ բնակավայրերում XIX դ. վերջին ու XX դ. սկզբներին պատրաստվել էին մեծ թվով գորգագործուհիներ, ու այդ հանգամանքն էլ կարևորվեց գորգագործական ձեռնարկությունների հիմնադրման վայրերի ընտրության հարցում:

Այդքանով հանդերձ՝ պետք է նկատի ունենալ, որ հայոց մեջ տնայնագործական գորգագործությունը մինչ 1870-80-ական թվականները ապրան-

---

[1] «Բյուրակն », 20 մարտի, 1904, թիվ 12, Կ.Պոլիս, էջ 244:

[2] Նույն տեղում:

[3] «Բիւզանդիոն», Կ. Պոլիս, 1898, թիվ 647:

[4] Հակոբ Թերզեան, էջ 829

[5] Նույն տեղում

[6] Է. Մելքոնյան, Հայկական բարեգործական ընդհանուր միության որբախնամ գործունեությունը 1910-30-ական թթ., Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր, Գիտական աշխատություններ, 4, Եր., 2001. էջ 129:

[7] Է. Մելքոնյան, նշվ.աշխ., էջ 137:

քային բնույթ չէր կրում. գորգեր հիմնականում գործում էին սեփական կարիքների համար: Փոքր Ասիայում գոյություն ունեցած սակավաթիվ ձեռնարկություններում աշխատում էին հիմնականում քուրդ, թուրք և ավշար կանայք ու աղջիկները, և դրանք էլ կենտրոնացված էին փոքրասիական գորգագործական հայտնի կենտրոն Ուշակ քաղաքում: Բայց այն, որ Ուշակի գորգագործական ձեռնարկություններում մահմեդական գորգագործուհիներն էին աշխատում, բոլորովին էլ չի վկայում նրանց մասնագիտական բարձր ունակությունների մասին: Մասնագիտական բարձր կարողություններ ունեցող ու բարձրորակ գորգեր գործող գորգագործների անհրաժեշտությունը պահանջվում էր սուլթանական ֆաբրիկաներում՝ Կում Կափուում ու Հերեկեում, որոնցում տեխնոլոգներն ու գորգագործուհիները մեծ մասաբ հայեր էին:

Պատկեր 3. Քրիստոնյա և մահմեդական գորգագործուհիներ:

Ինչպես վերը նշվեց, հայոց գերդաստաններում գորգեր գործում էին հիմնականում սեփական կարիքների համար: Վաճառքի համար գործում էին, երբ դա դառնում էր ընտանիքի կերակրման հիմնական միջոց: Այս առումով բնորոշ օրինակ է Փոքր Հայքի Ակն քաղաքի հայուհիներին վերաբերող մի տեղեկություն: Այստեղ, ինչպես նշում է ուսումնասիրողը, 1896թ. տեղի ունեցած ջարդերից հետո, շատերը «պատառ մը չոր հաց ճարելու համար, գիշեր ցերեկ աչքի լուս թափելով խալի կըգործեին»[1]: Հենց այդ կարգի անհրաժեշտության դեպքերում է, որ հայուհիներն անցնում էին ապրանքային գորգագործությանը:

Փոքր Ասիայում գորգերի զանգվածային արտադրության ասպարեզում անհամեմատ մեծ նշանակություն ունեցան արևմտաեվրոպական ձեռներեցները: Առաջիններից մեկը **«Օրիենտալ կարպետ»** ընկերությունն էր,

[1] Ակն և ակնցիք, նախաձեռնեց և հավաքեց՝ Առաքել Քեչեան, աշխատասիրեց, դասավորեց և խմբագրեց՝ Մկրտիչ Պարսամեան, Փարիզ, 1952, էջ 411:

որն ավելի շատ հայտնի էր **«Շարգ»** (թուրքերենով՝ արևելք) անվանումով: Այդ ընկերության կենտրոնատեղին Իզմիրն էր, իսկ ֆաբրիկաները գտնվում էին Փոքր Ասիայի ավանդական գորգագործական կենտրոններում և բնականաբար նկատի էր առնված դրանցում էժան ու որակյալ աշխատուժի և բարձրորակ հումքի առկայությունը: Այդպես ստեղծվում են հազարավոր աշխատատեղեր ու բացի դրանից՝ պատվերներով ապահովվում են հարյուրավոր ու հազարավոր տնայնագործներ:

Դրանք հատկապես շատ էին Սեբաստիայում ու շրջակա ավաններում ու կատարում էին նաև Եվրոպայից ստացված անհատական պատվերներ[1]: Խոշորագույններից էր Սեբաստիային մերձակա 250 տուն ունեցող հայաբնակ Դավրա գյուղի ձեռնարկությունը, որտեղ կար շուրջ 150 տորք[2]: Հնչակյան կուսակցության նշանավոր գործիչ Սապահ Գուլյանն իր ուղեգրական նշումներում հիշատակել է, որ այդտեղ գործված գորգերը մեծ մասամբ արտահանվում են Եվրոպա: Այս հեղինակը նկատել է նաև դրանց թվում մեծարժեք նմուշներ, որոնք, իր կարծիքով, ունեին 10-300 ոսկու արժողությամբ գորգեր ու աչքի էին ընկնում իրենց «նկարչական նրբություններով»[3]: Սաբահ Գուլյանն ընդհանրապես կարևոր տեղեկություններ է հաղորդել Մարզվան-Արաբկիր ճանապարհին եղած բնակավայրերերի տնտեսական վիճակի մասին, ու դրանց թվում բավականի շատ են գորգագործությանը վերաբերողները: Մասնավորապես Մարզվանի հետ կապված՝ նշում է Սեբաստացի Միհրան Խորիկյանի կողմից այդտեղ հիմնված գորգագործական ֆաբրիկայի մասին ու նաև տեղեկացնում, որ գործարանատիրոջ պատմելով՝ Իզմիրի խոշոր գորգավաճառների կողմից պայքար էր գնում գորգի շուկայում մենաշնորհի հասնելու համար[4]: Գամիրքի կամ Փոքր Հայքի գորգագործության վերաբերյալ կատարած իր հետազոտություններում Վարդան Թեմուրճյանը նշել է, որ XIX դ. երկրորդ կեսին Արևմտյան Հայաստանում ու Փոքր Ասիայի հայաբնակ վայրերում կազմավորվել էին գորգագործության ու մետաքսագործության բազմաթիվ մանր արհեստանոցներ: Միայն Սեբաստիայում XIX դարի 90-ական թվականներին կային արդեն 60-70 այդպիսի արհեստանոցներ, որոնցից յուրաքանչյուրում աշխատում

---

[1] Ս. Սապահ-Գուլեան, Փոքր Հայքի յիշատակներ, Չիկագո, 1917, էջ 282,298:

[2] Վ. Թեմուրճյան, Գորգագործությունը Հայաստանում, Եր., 1955, էջ 109, Ս. Սապահ-Գուլեան, նշվ. աշխ., էջ 281:

[3] Ս. Սապահ-Գուլեան, նշվ. աշխ., էջ 300-301:

[4] Ս. Սապահ-Գուլեան, նշվ. աշխ., էջ 109:

էին 5-10 գորգագործուհիներ, երբեմն էլ կրկնապատիկը: Այդպիսիներից էին, օրինակ, Արմենակ Թորգոմյանի գորգագործարանը, **«Ալբերտ Էյոտ»** ընկերությունը և այլն[1]: Ընդհանրապես եղած բոլոր տեղեկությունները հնարավորություն են տալիս եզրակացնել, որ հայ գորգագործուհիներն ու տեխնոլոգները ոլորտում ունեին առանցքային դերակատարություն: Այս առումով հատկանշական են XX դ. սկզբներին արված Կոստանդնուպոլսի մերձակայքում գտնվող Հերեկեի սուլթանական ֆաբրիկային վերաբերող լուսանկարները: Պատկերված են տորքերի դիմաց նստած գորգագործուհիներ, գորգանկարիչների արվեստանոցն ու նաև գորգերի վերականգման հետ կապված գործընթացները ներկայացնող լուսանկարներ, որոնք ակնհայտորեն մատնանշում են այդ ձեռնարկության բարձր մակարդակը[2]: Երևում են մաշված հին գորգեր ու դրանց առանձին հատվածներ, որոնցից օգտվել են նկարիչները նոր գորգանկարներ ստեղծելու գործում: Տարիքավորների կողքին աշխատում են նաև պատանիներ ու նաև մի աղջիկ[3]: Կարևոր մանրամասն է այն, որ կանայք ու աղջիկներն անկաշկանդ են ու լուսանկարված են բաց դեմքերով, որից էլ հետևում է, որ գորգագործուհիները հայուհիներ են: Մահմեդական կանայք ու աղջիկները գորգը գործում էին դեմքները ծածկած ու չադրայով փաթաթված վիճակում **/Պատկեր 3,4/**[4]:

Հաշվի առնելով հոդվածի սահմանափակ ծավալը՝ մենք այստեղ կներկայացնենք միայն ապրանքային գորգագործության կենտրոններից մի քանիսը, որոնք էլ հնարավորություն են տալիս պատկերացում կազմել ոլորտի ընդհանուր նկարագրի մասին:

Պատկեր 4. Մահմեդական գորգագործուհիներ:

Սիվրի - Հիսար: Փոքրասիական գորգագործական մշակույթի ավանդական կենտրոններից է: Քաղաքի հայերը հիմնականում արհեստավորներ էին, զբաղվում էին նաև գորգագործությամբ: Ուսումնասիրողներ այն կարծիքն են ար-

[1] Վ. Թեմուրճյան, Գորգագործությունը Հայաստանում, էջ 109, A.Alpan, նշվ.աշխ., էջ 95-96:
[2] Trames d'Armenie, էջ 56, 57:
[3] Trames d'Armenie, էջ 69, 70:
[4] Collection Galerie Attila, Volume 1, էջ 6 /հրատարակման տեղն ու թվականը նշված չեն/:

տահայտել, որ այստեղի հայերը փոքրասիական գորգագործական մի շարք կենտրոնների թվում նույնպես ունեին արևելահայաստանյան ծագում ու մասնավորապես կապվում են Արցախի հետ, որին բնորոշ բարբառը անանշան փոփոխություններով մինչ XIX դարի վերջերը պահպանվել էր մերձակա Սպարտա, Յողեմիշ, Բուրդուր բնակավայրերում[1]: Այստեղ զարգացած էր թիֆթիկի արտադրությունը, կտավագործությունն ու գորգագործությունը: Վերջինս համատարած էր հայերի մեջ, գործում էին հիմնականում վաճառքի համար՝ տնայնագործական կամ մանուֆակտուրային սկզբունքով, ու արտահանվում էին ինչպես մերձակա քաղաքներ՝ այդ թվում Կ.Պոլիս, այնպես էր եվրոպական երկրներ: Ընդ որում այստեղ գործված գորգերի թվում մեծ տեղ էին գրավում Արևելյան Հայաստանին բնորոշ գորգերի բազմաթիվ տիպեր, որոնք լայն պահանջարկ էին վայելում եվրոպական շուկայում: Սիվրի-Հիսարում էլ գորգագործությունը և ասեղնագործությունը ուսուցման պարտադիր առարկա էին տեղի աղջկանց վարժարանում[2]:

Աֆիոն Կարահիսար: Այստեղի հայերը նույնպես զբաղվում էին գորգագործությամբ: Հայտնի է, որ նրանք հայտնվել են XVI դարի կեսերին, երբ օսմանյան սուլթանները Պարսկաստանի դեմ պատերազմելու ընթացքում տեղահանեցին արևելյան Հայաստանի մի շարք տարածաշրջանների հայերին ու բնակեցրին Կ.Պոլիսում ու Փոքր Ասիայի արևմտյան մասերում[3]: Եղած տեղեկությունների համաձայն՝ թեև այս քաղաքի հայերի գորգագործությունը կրում էր տնայնագործական բնույթ, սակայն արտադրանքը հայտնի էր քաղաքի սահմաններից դուրս ու արտահանվում էր այլ վայրեր: Գործում էին տարատեսակ՝ այդ թվում **«Իզմիր»** ու **«Անկարա»** անվանումներով գորգեր, որոնց համբավը տարածված էր արտասահմանում: Գործում էին նաև քիլիմ /կարպետ/ և ջեջիմ, որոնք, ունենալով մատչելի գին, սպառվում էին նաև ներքին շուկայում: Նշանավոր գորգագործներից էին Ա.Տոյմեճյանը, Հ.Համդիլյանը և ուրիշներ[4]:

Ուրֆա: Արհեստների հանրահայտ կենտրոն էր, հայտնի էր նաև գեղարվեստական գործվածքին վերաբերող արհեստներով: Այդ նպաստավոր

---

[1] Պատմագիրք Սիվրի-Հիսարի հայոց /տեղագրական, պատմական և ազգագրական/, աշխատասիրեց՝ Գրիգոր Տէր-Յովհաննիսեան, Պեյրութ, 1965, էջ 451:

[2] Այս ամենի համար տես՝ նշվ.աշխ., էջ 518-521:

[3] Կ. Հ. Չերքեզյան, Աֆիոն Կարահիսարի հայկական համայնքը /ազգագրական ուսումնասիրություն/,«Պատմաբանասիրական հանդես», 1981, թիվ 1, էջ 292:

[4] Կ. Հ. Չերքեզյան, նշվ. աշխ., էջ 297:

պայմանները հաշվի առնելով էլ 1897 թվականին դոկտոր Յոհան Լեպսիուսը Բեռլինի մերձակայքում գտնված իր գորգագործական ֆաբրիկան եկամտաբեր դարձնելու համար ամբողջությամբ տեղափոխում է Ուրֆա[1]: Նա ձեռք է բերում քաղաքի Մասմանե հայկական թաղամասում գտնվող Ֆրանսիայի հյուպատոսարանի «Մասմանե» անունով շենքն ու այն դարձնում է գորգագործական ֆաբրիկա[2]: Սկզբնական շրջանում որպես գծագրող, ներկակար ու մեխանիկ աշխատում էին գերմանացի մասնագետները, որոնք սկզբնապես կային գործարանի տեղակայման նախկին վայրում: Տնօրենը Ֆրանց Էքարտն էր, գորգանկարներ կազմողն էլ նրա տիկինը՝ Էմմա Էքարտը: Մի քանի տարի անց տեղում մասնագիտանում են տեղացի հայ գորգագործներն ու ներկակարները: Հատկապես հայտնի էին ներկակարներ Կարապետ ու Մկրտիչ Քելեճյանները, գծագրող Կարապետ Ոսկերչյանը[3]: Գորգագործուհիների թիվն այդ ժամանակ հարյուր էր, «ամենքն ալ հայուհիներ»[4]: Յուրաքանչյուր տորքի դիմաց նստած էին 5-6 գորգագործուհի: Ֆաբրիկայում կար նաև ուսուցման համար առանձնացված առանձին տարածք:

Օգտագործվում էր տեղական բուրդը, որը ներկում էին տեղում բնական ներկանյութերով: Հետագա տարիներին, չնայած գորգի շուկայում պարբերաբար կրկնված ճգնաժամներին, այդ ձեռնարկությունը ընդլայնում էր արտադրանքի ծավալները: Բրունո Էքարտը՝ Ֆրանց Էքարտի կրտսեր եղբայրը, հիշում է, որ այնտեղ 1915 թվականին աշխատում էին 250 հայ գորգագործուհիներ[5]: 1915 թվականի հոկտեմբեր-նոյեմբերին թուրքերը նրանց նույնպես աքսորում են Սիրիա, փակվում է «Մասմանեն», ու դրանով, ինչպես գրում է Բրունո Էքարտը, «վերջին հարվածն է հասցվում Ուրֆայում գերմանական արդյունաբերական և քարոզչական աշխատանքներին»[6]: Այս բարգավաճող ձեռնարկության փակվելու փաստն ինքնին շատ բան է մատնանշում, ու դրանցից հիմնականն այն է, որ գործարանատերերը Ուրֆայում ու շրջակա բնակավայրերում ապրող քրդական ու թուրքմենա-

---

[1] Գ. Կ. Ռ., Արուեստական կեանքեն.Գործարանի մը շուրջ, «Ծաղիկ» օրաթերթ, Կ. Պոլիս, ԺԳ տարի, թիվ 51, 1895, նոյեմբերի 3:

[2] Բրունո Էքարտ, Ապրածս օրերը Ուրֆայում, Պոտսդամ, 1922,/գերմ.թարգմ. Ա. Գասպարյանի, ներածական մասը, ծանոթագրությունները, խմբագրումն ու հրատարակումը՝ Ժ. Ավետիսյանի/, Եր., 1990, էջ 19:

[3] Արամ Սահակյան, Դյուցազնական Ուրֆան և իր որդիները, Պեյրութ, 1955, էջ 500-501:

[4] Նույն տեղում:

[5] Բրունո Էքարտ, նշվ. աշխ., էջ 6,15,19:

[6] Բրունո Էքարտ, նշվ. աշխ., էջ 47:

կան ցեղերից չեն կարողանում իրենց պահանջներին համապատասխանող գորգագործներ ու տեխնոլոգներ գտնել: Սա այն դեպքում, երբ արտերկրի գորգագետները փոքրասիական գորգագործության հարցում կարևորում են բացառապես մահմեդական ցեղերին: Ի դեպ, այդ գործարանում տեղադրված գորգի տորքերի լուսանկարից նկատվում է, որ դրանք ունեցել են տեխնիկական լրացուցիչ մեխանիզմներ, որոնք բավականին հեշտացրել էին աշխատանքի ընթացքը՝ գորգի հենքի պատրաստումը, հենքաթելերի շարքերի տեղերի փոփոխումը, արդեն գործված մասը տորքի վերին լծին փաթաթելը և այլն[1]:

Սպարտա: Գորգագործությունը զարգացած էր նաև Սպարտայում: Սակայն եթե նախկինում այնտեղ կարելի էր գտնել միայն հատուկենտ տորքեր, 1890-ական թվականներին նշանավոր գորգանկարիչ ու գորգի տեխնոլոգ Խաչիկ Գազազյանը ձեռնարկատեր Թագվոր Սպարտալյանի միջոցով այդտեղ հիմնեց տնայնագործական մանուֆակտուրաներ, որոնք, բացի փոքր տորքերից, ընդհանուր առմամբ ունեին մոտ յոթ հարյուր խոշոր տորք[2]: Այդ ձեռնարկի շնորհիվ Սպարտայում նույնպես սկսեց զարգանալ ապրանքային գորգագործությունը:

Ուշակ: Այստեղի գորգագործության նկարագրի մասին ուշագրավ տեղեկություններ կան XIX դարի վերջերին արված դիտարկումներում: Մասնավորապես նշվում է, որ 60-ական թվականներից գորգագործությունը սկսում է զարգանալ նաև Պուրսայի կուսակալությունում գտնվող այդ քաղաքում[3]: Ապրանքային գորգագործության զարգացման հետ միաժամանակ այդ ոլորտում սկսում են աշխատել նաև Ուշակի հայուհիները: Ընդ որում այս առնչությամբ, ինչպես վերը նշեցինք, սկզբնական շրջանում նորաստեղծ ձեռնարկություններում առավելապես աշխատում էին թրքուհիները: Աղբյուրի պատմելով՝ «հայք, ինչպէս նաև յոյները ասկէ տասնվեց տարի յառաջ յաջողած են իրենց ընտանեաց մջ ներմուծել այս արուեստը և այսօրուան օրս գրեթէ ամէն հայ և յոյն տան բակին մէջ կտեսնուին գորգի գործարաններ»[4]: Գորգագործությամբ Ուշակում զբաղվում էին նաև կաթոլիկ հայերը[5]: Աղջիկներն այստեղ դպրոց չէին գնում. 4-5 տարեկանից սկսած՝ նրանք նստում են

[1] Արամ Սահակյան, նշվ. աշխ., էջ 501:

[2] Վ. Թեմուրճյան, Գորգագործությունը Հայաստանում, էջ 114-115:

[3] «Ուշագ և Ուշագի հայերը», «Հանդէս ամսօրեայ», ԺԲ տարի, թիվ 7, հուլիս, 1896, էջ 207:

[4] Նույն տեղում:

[5] Նույն տեղում:

գորգի դիմաց ու սովորում այդ արհեստը[1]: Հոդվածագիրը տեղեկացնում է նաև, որ իր ապրած ժամանակաշրջանում՝ 1890-ական թվականներին, այդ քաղաքում կար 115-120 հայ տուն, իսկ «բնակչութեան մեծ մասը զբաղած կգտնենք գորգի շինութեամբ, ոմանք բուրդ կպատրաստեն, կգզեն, ոմանք կմանեն, ոմանք գորգի օրինակներ կգծագրեն. բազմաթիվ կին և աղջիկ նստած կգործեն և ոմանք էլ լմնցած գորգերը Զմիուռնիա կիջեցնեն, ուսկից կղրկվի Եվրոպա և գլխավորաբար Ամերիկա[2]: Գորգի հայտնի վաճառականներ էին Եղիա Սպարթալը, Հակոբ Շահինյանը, Կարապետ Պերպերյանը, Հակոբ Հայթայանը»[3]:

Ինչպես տեսնում ենք, Փոքր Ասիայում ծավալված գորգերի զանգվածային արտադրությունը հիմնականում կենտրոնացված էր հայաշատ բնակավայրերում, և մասնագիտական կադրերի հիմնական մասն էլ հայերն էին: «Մասմանեի» օրինակը վկայում է, որ առանց հայ մասնագետների որակյալ գորգերի արտադրությունը բացառվում էր: Վերոշարադրյալից կարելի է հստակորեն եզրակացնել, որ այսպես կոչված փոքրասիական կամ անատոլիական ավանդական գորգերի ավանդույթների ձևավորման ու նաև հետագայում կազմակերպված գորգերի ապրանքային արտադրության գործում որոշիչ էր հայոց ավանդը: Արտադրական ձեռնարկություններում գերակշռում էին հայ մասնագետները, առանց որոնց հնարավոր չէր լինի ապրանքային գորգագործության նման զարգանալը: Դրա պատկերավոր ապացույցը Ուրֆայի «Մասմանե» ֆաբրիկայի ճակատագիրն է, որը հայերի աքսորից հետո ուղղակի դադարեց գոյություն ունենալուց:

Այս առումով պատկերավոր են նաև վիճակագրական հետազոտությունները: Մասնավորապես թուրք տնտեսագետ Ալփանը պարզել է, որ 1913-1914 թվականներին Իզմիրի նավահանգստից արտահանվել էր 2000 տոննա գորգ: 1919-1922 թվականներին, երբ Փոքր Ասիան ամբողջությամբ դատարկված էր հայերից, արտահանվել էր միայն 924 տոննա գորգ, հետագայում էլ՝ մինչ 1930 թվականը, այն հասել էր միայն 1246 տոննայի[4]:

Ալփանը ուսումնասիրել է նաև գորգագործության զարգացման շարժընթացը Հունաստանում: Բանն այն է, որ Մեծ եղեռնից փրկվածներն ու

---

[1] Նույն տեղում, էջ 208:

[2] Վ. Թեմուրճյան, Գորգագործությունը Հայաստանում, Եր., 1955, էջ 115:

[3] Նույն տեղում:

[4] A. Alpan, The economice impant of the 1923 Greco-turkish population exchange upon Turkey, 2008., էջ 99:

հույն-թուրքական պատերազմի ավարտից հետո Իզմիրից ու մերձակա բնակավայրերից արտաքսված հայերը ապաստան էին գտել Հունաստանում: Գորգագործության մեջ հմտացած հայերի ներհոսքը հնարավորություն է տվել մեծապես ավելացնել այդ երկրում ատադրվող գորգերի քանակությունը: Ըստ այդմ 1923 թվականին արտադրված 430.000 դոլարի արժեքի գորգի փոխարեն 1927 թվականին արտադրվել էր 1.750.000 հազար դոլարի արժեքի գորգ[1]:

THE ETYMOLOGICAL CHARACTERISTICS OF COMMODITY CARPET WEAVING IN THE CARPET WEAVING CENTERS IN ASIA MINOR

(last quarter of the 19th century - first quarter of the 20 th century)

POGHOSYAN ASHKHUNJ

PhD in Historical Sciences, Associate Professor,

GSU Lecturer

e-mail: ashkhunjpoghosyan@gmail.com

During the period under discussion, commodity carpet weaving in Asia Minor was in a sharp rise, driven by the rising demand for hand-made carpets in Western Europe and the USA. For obtaining inexpensive and numerous carpets, a number of carpet companies such as «Oriental rug», «Albert & Eliot» etc. set up factories in Asia Minor settlements known for their carpet weaving traditions. There were already favorable conditions in the region for the rise of commodity carpet weaving: Carpet weavers and other specialists for carpet weaving were trained in Armenian schools, orphanages and institutions for caring widows. In addition to foreign companies, local Armenian entrepreneurs were also involved in the production of carpets (Grigor agha Gondukchyan, Movses Telfeyan, Armenak Torgomyan, Tagvor Spartalyan etc). The carpet makers and other specialists in these and also in the sultan carpet factories «Kum-Kapu» and «Herekke» were mainly Armenians. Most of the carpet weaving companies were closed after the displacement of Armenians and the production volumes were reduced several times.

Key words: *carpet-weaving, Asia Minor, Manufacturing, orphanage, «Masmane», Kesaria, Urfa:*

[1] A. Alpan, նշվ.աշխ., էջ 102:

ОСОБЕННОСТИ ПРОИСХОЖДЕНИЯ ТОВАРНОГО ПРОИЗВОДСТВА В КОВРОТКАЦКИХ ЦЕНТРАХ МАЛОЙ АЗИИ

(пос. четверть XIX в. –первая четверть XX в.)

ПОГОСЯН АШХУНДЖ

Кандидат исторических наук,

Преподаватель ГГУ

электронная почта: ashkhunjpoghosyan@gmail.com

В конце XIX века в ковроткацких центрах Малой Азии начался бум массового ковроткачества, что обьясняется бурным ростом потребления восточных ковров ручного прозводства в странах западной Европы и США. Учитывая выгодные условия традиционных центров малоазийских регионов и в надежде на дешевую продукцию, крупные фабриканты Запада начали там основывать ковроткацкие фабрики. Для развертывания крупномасштабного производства там были необходимые сырьевые ресурсы и достаточное количество высококвалицифированных готовых ковроткачих. Кроме западных производителей в сфере ковроткачества отличались местные фабриканты (Григор Гондукчян, Мовсес Телфеян, Арменак Торгомян, Тагвор Спарталян и другие). Как указывают данные, в существуюших фабриках, и, в частности, в султанских фабриках «Кум Капу» и «Эрекке», основную часть ковроткачих составляли армянки. Это доказано тем, что после геноцида и выдворения армян из населенных пунктов западных регионов полуострова, производство ковров пережило глубокий кризис и основная часть ковроткацких заведений закрылись.

Ключевые слова: *мануфактура, «Масмане», сиротство, ковроткачество, Кесариа, Малая Азия, Урфа.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 25.08.2021թ.:
Հոդվածը գրախոսվել է 01.10.2021թ.: